

## ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ. 1

2019 թվականի սեպտեմբերի 5-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 1-ին Բ դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները և տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Զոյա Գևորգյանը:

### ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. Դասարանի ծնողական խորհրդի՝ նախագահի և անդամների ընտրություն:
2. Տարրական դասարաններում «Տար սնունդ» ծրագրին ծնողական աջակցություն ցուցաբերելու և ծնողական ներդրումների հարցը:
3. Ընթացիկ հարցեր:
  1. Լսեցին.-Դասարանի ծնողական խորհրդի՝ նախագահի և անդամների ընտրության հարցը:

Դասվար 2. Հակոբյանը նախ շնորհավորեց բոլոր ծնողներին նոր ուսումնական տարիվա կապակցությամբ, ծանոթացավ ծնողների հետ և ասաց, որ չորս տարի համագործակցելու են իրար հետ, և շատ է ցանկանում, որ այդ համագործակցությունն ընթանա փոխադարձ հարգանքի և վստահության մթնոլորտում: Հակոբյանը նշեց նաև, որ ձեսպորելու են ծնողական խորհուրդ՝ նախագահ և անդամներ: Ծնողական խորհուրդն ունի իր կարևոր դերն ու նշանակությունը դպրոցում կազմակերպվող ցանկացած աշխատանքներում:

Ընտրվեց ծնողական խորհուրդ հետևյալ կազմով՝

1. Թամարա Գաբրիելյան
2. Զառա Թորոսյան
3. Լիլիթ Գևորգյան
4. Անի Բաբայան
5. Լիլիթ Այվազյան

Ակտիվ բվեարկության արդյունքում ծնողական խորհրդի նախագահ ընտրվեց Թամարա Գաբրիելյանը:

Որոշեցին.-Բարեխողճորեն կատարել իրենց վստահված գործը, օգնել դասվարին:

2. Լսեցին. Տարրական դասարաններում «Տար սնունդ» ծրագրին ծնողական աջակցություն ցուցաբերելու և ծնողական ներդրումներ կատարելու հարցը:

Դասվար 2. Հակոբյանը ծնողներին ծանոթացրեց «Տար սնունդ» ծրագրին: Նա ասաց, թե ինչ սննդամթերք է ընդգրկված այդ ծրագրի շրջանակներում, որը բավարար չէ այն ռացիոնալ կազմակերպելու համար: Անհրաժեշտ է նաև ծնողական

աջակցություն և ծնողական ներդրումներ: Ուսուցչութին ասաց, որ այդ ներդրումները լինելու էն 300 դրամի սահմանում: Գումարները տնօրինելու էն յուրաքանչյուր դասարանից ընտրված ծնողները:

Որոշեցին, -Հավաքել 300-ական դրամ և այդ աշխատանքը հանձնարարել ծնողական խորհրդի նախագահ Թամարա Գաբրիելյանին:

Լսեցին.-Ընթացիկ հարցեր/դասացուցակ, ռեժիմ/:

2. Հակոբյանը ծանոթացրեց դպրոցական ռեժիմին: Ծնողներին ներկայացրեց իրենց երեխաների շաբաթական ծանրաբեռվածությանը /20 ժամ/, 1-ին դասարանում ուսումնասիրվող առարկաներն ու դասավանդող ուսուցիչներին:

Որոշեցին,- Բարեխղճորեն կատարել իրենց պարտականությունները, հետեւ աշակերտների սանիտարահիգիենիկ վիճակին, մշտական կապ պահպանել դասվարի և դպրոցի հետ:

Ծնողակն ժողովի նախագահ՝

թիւք

Թամարա Գաբրիելյան

Քարտուղար՝

թիւք

Զառա Թորոսյան